«ԼՈՌԻ-ՓԱՄԲԱԿ» ԵՆԹԱԽՄԲԻ ԳՈՐԳԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՐԵԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ON THE ORIGIN AND DISTRIBUTION AREALS OF THE "LORI–PAMBAK" CARPET SUBGROUP

О ПРОИСХОЖДЕНИИ КОВРОВ ПОДГРУППЫ «ЛОРИ-ПАМБАК» И АРЕАЛЕ ИХ РАСПРОСТРАНЕНИЯ

Աշխունջ Պողոսյան
Ashkhunj Poghosyan
Ашхундж Погосян

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր
Сардарапатский мемориальный комплекс
Memorial complex of Sardarapat battle

poghosyanashkhunj@ etnomuseum.am

Ներկայացվել է՝ 11.07.2024; գրախոսվել է՝ 07.07.2025; ընդունվել է՝ 12.08.2025
Received: 11.07.2024; Revised: 07.07.2025; Accepted: 12.08.2025
Представлено: 11.07.2024; рецензировано: 07.07.2025; принято: 12.08.2025

DOI: 10.53548/0320-8117-2025.2-215

Ամփոփում – Հայկական գորգերի մեջ առանձնանում են «Լոռի-Փամբակ» տիպի գորգերը, որոնք բնորոշվում են ոճավորված ու խոշոր խաչազարդով, որը մենք տարբերակել ենք «Լոռի-Փամբակ խաչազարդ» անվանումով: Մեր հետազոտությունների ընթացքում բացահայտել ենք այդ հորինվածքի տարբերակներով բնորոշվող գորգերի ևս երկու տիպ, որոնք անվանել ենք «Լոռի» և «Փամբակ» անվանումներով: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ մենք դրանք ներառել ենք մեկ՝ «Լոռի-Փամբակ» ենթախմբում: Դաշտային ազգագրական նյութերի, XIX–XX դդ. սկզբներին վերաբերող գրավոր և ավելի վաղ ժամանակաշրջանների պատկերային աղբյուրների պատմահամեմատական ուսումնասիրության շնորհիվ որոշակի պարզաբանումներ ենք իրականացրել դրանց ծագումնաբանության, տարածման արեալների, ինչպես նաև էթնիկական պատկանելության հետ կապված հարցադրումներում: Այդ ամենը նկատի ունենալով՝ անընդունելի և հիմնազուրկ ենք համարում այս ենթախմբի գորգերի գեղազարդման համակարգի հիմնական հորինվածքը՝ ոճավորված խաչազարդը, թուրքմենական գորգերին բնորոշ վարդակների հետ (գյոլ) համադրելը: Նման համեմատությունների հետևանքով Վաշինգտոնի գործվածքի թանգարանի փորձագետ Ռաուլ Չեբուլը խնդրո առարկա գորգերի գեղազարդման համակարգի հայտնվելը պատմական Հայաստանի հյուսիսարևելյան գորգագործական կենտրոններում (Լոռի, Տավուշ, Գարդման, Ջրաբերդ և այլն) բացատրում է սելջուկյան և դրան հաջորդած այլ քոչվոր ցեղերի ներթափանցումներով: Այս տեսակետը ընդունելի են համարում արտերկրի գորգագետները: Հոդվածում անդրադարձ է արված նաև «Լոռի-Փամբակ» ենթախմբի գորգերի ավանդույթների տարածման արեալներին և դրանց գեղազարդման հիմնական տարրերի խորհրդաբանությանը:

Abstract – Among the typical Armenian carpets, the "Lori-Pambak" type of carpets are unique and characterized by a stylized, large cross ornament, which we classified as the "Lori-Pambak cross ornament". In the course of our research, we discovered two more types of carpets characterized by versions of that ornament, which we named "Lori" and "Pambak". We included them in the "Lori-Pambak" subgroup. As a result of a historical and comparative study of ethnographic fieldwork materials of the 19th – early 20th centuries, written sources, and visual sources of earlier periods, we made certain clarifications in the issues of genealogy, areas of distribution, as well as the ethnic affiliation of the carpets of this subgroup. It is unacceptable and unreasonable for us to compare the central ornament of the carpet decoration system of this subgroup, the stylized cross, with the rosettes (gyol) of Turkmen carpets. As a result of such comparisons, Washington Textile Museum expert Raul Chebul attributed the emergence of the mentioned system of carpet ornamental design in the traditional carpet weaving centers of northeastern Armenia (Lori, Tavush, Gardman, Jraberd, etc.) to the invasions of the Seljuk and other nomadic tribes. Some carpet experts consider this point of view acceptable. The article also refers to the distribution areas of the carpet traditions of the "Lori-Pambak" subgroup and the symbolism of the main elements of their decoration.

Аннотация – Среди армянских ковров особо следует выделить ковры типа «Лори-Памбак», для которых характерен стилизованный крупный крестовый орнамент, легший в основу их названия «Крестообразная композиция Лори-Памбак». В ходе исследований нами были включены в одну подгруппу еще два типа ковров «Лори» и «Памбак». В результате историко-сравнительного анализа полевых этнографических материалов XIX – начала XX вв., письменных и изобразительных источников, относящихся к более ранним периодам, нами были внесены определенные уточнения в вопросы генеалогии, ареала распространения, а также этнической принадлежности ковров данной подгруппы. Крестообразная композиция ковров «Лори-Памбак» несопоставима с характерными для туркменских ковров розетками (гёл). На основе сравнительного анализа эксперт Вашингтонского музея текстиля Рауль Чебул появление рассматриваемой системы орнаментального оформления ковров в традиционных ковроткацких центрах северо-восточной Армении (Лори, Тавуш, Гардман, Джраберд и др.) связывает с сельджуками и иными кочевыми племенами. В статье рассматриваются вопросы ареала распространения традиций ковров подгруппы «Лори-Памбак» и символика основных элементов их композиционного оформления.

Հիմնաբառեր – Խաչազարդ, Լոռի, Տավուշ, ոճավորում, քոչվոր:
Keywords – Cross ornament, Lori, Tavush, stylization, nomad.
Ключевые слова – крестовый орнамет, Лори, Тавуш, стилизация, кочевник, мак.

Ներածություն

Հայոց գորգարվեստի գեղազարդման հիմնական տարրերի թվում առանձնահատուկ են ոճավորված ու խոշոր խաչազարդերը: Դրանց մի տարբերակով բնորոշվող գորգերը մասնագիտական շրջանակներում հայտնի են «Լոռի-Փամբակ», ինչպես նաև «Լամբալո», «Բորչալու» և այլ անվանումներով, որոնք բոլորն էլ մատնանշում են պատմական Հայաստանի հյուսիսարևելյան տարածքների գորգագործական կենտրոնները: Հայտնի են «Լոռի-Փամբակ» տիպին

բնորոշ խաչազարդով գեղազարդված գորգերի մի շարք այլ տարբերակներ, որոնք միավորել ենք մեկ ենթախմբում և այն ներառել հայոց ավանդական գորգերի՝ խաչազարդով բնորոշվող խմբում: Մասնագիտական շրջանակներում որոշ գորգագետներ խնդրո առարկա գորգերի գեղազարդման ավանդույթների հայտնվելը պատմական Հայաստանի գորգագործական կենտրոններում բացատրում են սելջուկյան ու դրան հաջորդած մոնղոլական և թուրքական ցեղերի ներթափանցումներով:

Հայոց գորգագործական մշակույթի մասին ամբողջական պատկերացում կազմելու հարցում մենք կարևորում ենք այս ենթախմբում ներառված գորգերի և մասնավորապես դրանք բնորոշող ոճավորված խաչազարդի նշանակությունը: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ սույն ուսումնասիրությամբ որոշակի պարզաբանումներ ենք իրականացրել խնդրո առարկա ենթախմբում ներառված գորգերի էթնիկական պատկանելության, տարածման արեալների, ինչպես նաև այդ հորինվածքի արտահայտած խորհրդաբանության հետ կապված հարցադրումներում:

Ենթախմբին պատկանող գորգերն ու դրանց գեղազարդման նկարագիրը

Անցած երկու դարում հայ և օտարազգի մի շարք ուսումնասիրողների կատարած հետազոտությունները ցույց են տվել, որ պատմական Հայաստանում գոյություն են ունեցել գորգագործական մշակույթի ավանդական կենտրոններ: Բավականին հստակ պատկերացումներ կան նաև դրանց՝ մասնավորապես Վասպուրականի, Բարձր Հայքի, Արցախի, Ուտիքի, Սյունիքի և Գուգարքի գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերի գեղազարդման համակարգերի, գույների ու գուներանգների և տեխնոլոգիական հատկանիշների մասին: Պիտի արձանագրենք, որ բոլոր դեպքերում էլ հայոց գորգերի գեղազարդման տարրերի և ընդհանրապես գեղազարդման համակարգերի հիմնական առանձնահատկություններից մեկը եղել ու մնացել է զարդանախշի ոճավորումը, դրանցում խորհրդաբանական պատկերացումների և ծիսամոգական բովանդակության առկայությունը:

Այս բոլոր առումներով էլ հայկական գորգերի մեջ առանձնանում են խաչազարդ հորինվածքով բնորոշվող գորգերի տիպերը, որոնցից մի քանիսն էլ՝ խոշոր ու ոճավորված խաչազարդով գեղազարդվածները, սույն ուսումնասիրության առարկան են: Այդ տիպերից առավել դասականը մասնագիտական շրջանակներում տարբերակված է «Լոռի-Փամբակ», ինչպես նաև «Ղազախ», «Բորչալու», «Լամբալո» և այլ անվանումներով (Պողոսյան 2010, 139–145; Керимов 1983, 146; Tschebull 1978, 257–261):

«Լոռի-Փամբակ» տիպը բնորոշվում է գորգադաշտի կենտրոնական հատվածում ներկայացված խաչաձև բարդ ու ոճավորված մեկ հորինվածքով: Դրա նկարագրից առաջին հերթին ակնհայտ են հնամենի ծիսամոգական պատկերացումների պատկերագրման որոշակի սկզբունքներ (նկ. 1) (ՀԱԹ 7199): Կենտրոնում, քառակուսի շրջանակում սովորաբար լինում է արևի կամ կյանքի ու բնության հավերժության հետ կապված որևէ խորհրդանիշ, որից սկզբնավորվում են խաչազարդի առանցքը կազմող ուղղաձիգ թևերը: Դրանք իրենց գծային ձևերով արդեն իսկ արտահայտիչ են այնքանով, որքանով որ ներկայացնում են դիմահայաց պատկերված կենդանակերպ զույգ ոճավորումներ:

Նկ. 1. Գորգ «Լոռի-Փամբակ»

Հորիզոնական թևերը համեմատաբար պարզ են և ավարտվում են երկրաչափականացված կոկոնաձև նախշով (նկ. 2): Այս ամենը սովորաբար ներկայացվում է բազմանիստ շրջանակում և լրացվում բուսածաղկային գծայնացված նախշերով ու կենդանակերպ մանր ոճավորումներով: Մենք այս հորինվածքը տարբերակում ենք «Լոռի-Փամբակ» խաչազարդ անվանումով: Գորգադաշտի վերի ու վարի մասերում սովորաբար պատկերվում է ներքուստ և արտաքուստ կեռիկներով երիզված մեկական զարդ: Ամեն պարագայում հարկ է նկատի ունենալ, որ առանցքային հորինվածքի ոճավորումը, լրացուցիչ տարրերի ներկայությունն ու դրանց պատկերագրման սկզբունքները հիմնականում բնորոշ են եղել Լոռվա և Տավուշի գորգագործական կենտրոններին: Հենց այդ հանգամանքով էլ պայմանավորված է մասնագիտական շրջանակներում շուրջ մեկուկես դար շրջանառության մեջ առկա այս տիպի գորգերին տրված և մեզ համար էլ ընդունելի «Լոռի-Փամբակ» անվանումը:

Նկ. 2 «Լոռի-Փամբակ» տիպի հիմնական հորինվածքը

«Լոռի-Փամբակ» տիպի դասական նմուշների բնորոշիչներից մեկն էլ իրար կցված եռաժանիների շարանով գեղազարդված կենտրոնական լայն գոտին է:

Մի քանի տասնամյակ շարունակված դաշտային ազգագրական աշխատանքների ու նաև այս ենթախմբին պատկանող գորգերի հրատարակումներում տեղ գտած նյութերի ուսումնասիրությունների շնորհիվ, բացահայտել ենք «Լոռի-Փամբակ» խաչազարդով գեղազարդված գորգերի հնարավոր բոլոր տիպերն ու տարբերակները: Դրանց դասակարգման հարցում կարևորված է հիմնական հորինվածքի կառուցվածքը: Ըստ այդմ էլ առանձնացրել ենք ստորև ներկայացվող տիպերն ու դրանց տարբերակները.

Դասական տիպի տարբերակներ: Այդպիսիք համարել ենք այն գորգերը, որոնց գեղազարդման համակարգում առանցքայինը դասական «Լոռի-Փամբակ» խաչազարդն է: Այս տեսակետից առանձնացրել ենք սույն տիպին պատկանող երկու տարբերակ:

Նկ. 3. Գորգ «Լոռի-Փամբակ» (տարբերակ ա)

Տարբերակ ա. Գորգադաշտի ամբողջ երկայնքով պատկերված ձևավոր շրջանակի կենտրոնական՝ բազմանիստ հատվածում ամփոփված է «Լոռի Փամբակ» խաչազարդը, իսկ դրա վարի ու վերի մասերում էլ՝ երկայնաձիգ շրջանակի եռանկյունաձև ուրվագծով գագաթներում ներկայացված է «զարդ աշխարհի» մեկական վարդակ: Գորգադաշտի ազատ տարածքները սովորաբար գեղազարդվում են պատկերային, բուսածաղկային ու երկրաչափական մանր տարրերով (նկ. 3) (ՀԱԹ 7199): Խաչազարդի և բուսածաղկային, բայց խաչաձև ուրվագծով վարդակի համադրումը մեկ ընդհանուր շրջանակում ինքնին խորհրդանշական է ու ենթադրում է, որ այս տարբերակի ստեղծողները, անտարակույս, դրանով խորհրդանշել են որոշակի ծիսամոգական գործողություն և ավանդույթ: Մեր դիտարկումները թույլ են տալիս այս տարբերակի ծագման հնարավոր տարածաշրջանների թվում ներառել Գարդմանի, Տավուշի և Լոռվա գորգագործական կենտրոնները:

Տարբերակ բ. Այս դեպքում ամբողջ գորգադաշտը ծածկվում է բազմանիստ շրջանակում ամփոփված մեկից ավելի՝ սովորաբար երեք «Լոռի-Փամբակ» խաչազարդով: Գորգադաշտի ազատ մնացած տարածքները գեղազարդվում են երկրաչափական ու բուսածաղկային մանր տարրերով ու կենդանակերպ ոճավորումներով: Հիմնական տիպի այս տարբերակին պատկանող գորգերը

Նկ. 4. «Լոռի-Փամբակ» (տարբերակ բ)

առավելապես բնորոշ էին Տաշիր-Տավուշ գավառների ու նաև Շուլավեր-Բոլնիս-Խաչեն գորգագործական կենտրոններին (նկ. 4) (ՀԱԹ 5631/1):

Ինչպես տեսնում ենք, ակնհայտ են այս երկու տարբերակի և դասական տիպի աղերսները այնքանով, որքանով որ իրականում դրանց գեղազարդման բոլոր համակարգերի հիմնական տարրը միևնույն հորինվածքն է:

Բայց այս տիպի հետ բավականին հստակ առնչություն ունի գորգերի գեղազարդման ևս մեկ համակարգ: Խոսքը վերաբերում է հայոց և ընդհանրապես արևելյան գորգերի համակարգում պահպանված առանձնահատուկ նմուշներին, որոնք չափազանց սակավաթիվ են: Դրանց գեղազարդման համակարգի հիմնական տարրը միայն «Լոռի-Փամբակ» ոճավորված խաչազարդի առանցքային՝ ուղղաձիգ հատվածն է, որի գագաթները նույնպես ավարտվում են դիմահայաց ներկայացված կենդանակերպ ոճավորումներով: Այս տարբերակում կենդանակերպ ոճավորումների միջնամասում պատկերված է նաև խաչ, որի երկու կողմում էլ ներկայացված է մեկական գծայնացված կենդանապատկեր (նկ. 5, 5ա).

Ըստ էության՝ պետք է ենթադրել, որ այս տիպին պատկանող գորգերը բնորոշ էին այն բոլոր գորգագործական կենտրոններին, որոնք հայտնի էին «Լոռի-Փամբակ» տիպի գորգերի ավանդույթներով: Դա միանգամայն տրամաբանական է, քանի որ այս տիպի գորգերի գեղազարդման հիմնական տարրը «Լոռի-Փամբակ» խաչազարդի կենդանապատկերների ոճավորումներով լրացված ուղղաձիգ հատվածն է՝ առանց որևէ էական փոփոխության: Գորգաղաշտի ազատ մնացած տարածքներն այս դեպքում նույնպես լրացվում են մանր ոճավորումներով: Իսկ ընդհանրապես, ծագումնաբանական առումով այս ենթախմբին պատկանող բոլոր տարբերակներն ու տիպերը ակնհայտորեն ունեն միևնույն ակունքն ու ծագել են միևնույն գորգագործական կենտրոնում և այդ առումով էլ հանդիսանում են վերն արդեն հիշատակված գորգագործական որևէ արհեստանոցում մասնագետ գորգանկարչի գծանկարով ստեղծված նախատիպի՝ հետագայում ձևավորված տարբերակներ: Միաժամանակ, ակնհայտ է,

որ այդ կենտրոնների միջև գոյություն են ունեցել պատմամշակութային սերտ կապեր ու ժողովրդագրական համանման նկարագիր:

Նկ. 5. Գորգ «Փամբակ»

Նկ. 5 ա. «Փամբակ» տիպի հիմնական հորինվածքը

Նման կենտրոնների թվում մենք նկատի ունենք այն բոլոր գորգագործական կենտրոնները, որոնցում շատ կամ քիչ հայտնի էին այս ենթախմբի դասական տիպի՝ «Լոռի-Փամբակի» ավանդույթները: Իսկ այդպիսիք առաջին հերթին Լոռու, Փամբակի, Գարդմանի, Ջրաբերդի, Տաշիրի գորգագործական կենտրոններն են:

Այսպիսով, հնարավոր ենք համարում ենթախմբի դասական հորինվածքի մի հատվածով բնորոշվող գորգերի տիպի ծագման կենտրոնների բացահայտման հարցում առաջին հերթին նկատի ունենալ վերը նշված գորգագործական կենտրոնները: Տիպի տարբերակման համար էլ մեր կողմից գիտական շրջանառության մեջ է դրված «Փամբակ» անվանումը: Ընդ որում՝ դրանում, բացի տարածքային ցուցչից, կարելի է տեսնել նաև գեղազարդման համակարգի առանձնահատուկ նկարագիրը. այն դասականի միայն ուղղաձիգ հատվածն է:

Միաժամանակ, այստեղ մենք ունենք մեկ նկատառում. քանի որ այս տարբերակի գեղազարդման համակարգի հիմնական տարրը, ի տարբերություն նախորդների, ոչ թե խաչազարդն է, այլ ոճավորված կենդանապատկերներից կազմված ամբողջությունը, մեր տիպաբանման համակարգում այն ներառված է թեմատիկ-պատկերային հորինվածքներով բնորոշվող գորգերի խմբում: Ինչպես տեսնում ենք, վերը ներկայացված բոլոր տարբերակների գեղազարդման համակարգերում հիմնական հորինվածքը իր պատկերագրման սկզբունքներով հիմնականում մնում է անփոփոխ: Սակայն հայոց բնորոշ գորգերի թվում գոյություն ունեն

այդ նույն հորինվածքի տարբերակներով հատկանշվող գորգեր, որոնց գեղազարդման համակարգն այդքանով հանդերձ, էականորեն տարբերվում է այս ենթախմբի դասական տիպի նկարագրից:

Մասնավորապես, կենդանակերպ ոճավորումները առավել գծայնացված ու համեմատաբար պարզունակ, իսկ խաչազարդի հորիզոնական «կակաչ» վարդակներն էլ ամբողջությամբ գծայնացված են: Ձևափոխված է նաև խաչազարդի միջուկը՝ միջնամասը, որտեղից սկզբնավորվում են թևերը՝ դրանք երկայնաձիգ են ու ձևավոր: Սակայն հիմնական լրացումը կատարված է գորգադաշտում: Նախ, այդտեղ ներկայացվում են ոչ թե մեկ, այլ՝ երկու խաչազարդ և բացի դրանից էլ այդ երկուսի միջանկյալ տարածքում տեղադրվում է շեղանկյունատիպ կամ բազմանիստ մի շրջանակ, որում սովորաբար պատկերվում են մանր, քառաթերթ վարդակներ կամ նմանատիպ այլ զարդեր: Երկրաչափական մանր զարդերով ու կենդանակերպ ոճավորումների տարատեսակ տարբերակներով էլ լրացվում են նաև գորգադաշտի ազատ մնացած տարածքները: Այս տիպին պատկանող գորգերի գորգադաշտը սովորաբար ամբողջությամբ ծածկված է լինում գեղազարդման իմաստն ու բովանդակությունը լրացնող տարատեսակ մանրամասներով (նկ. 6, 6 ա) (ՀԱԹ 5338): Մենք այս գորգերն առանձնացրել ենք որպես խնդրո առարկա ենթախմբին պատկանող առանձին տիպ ու տարբերակել ենք «Լոռի» տեղանունով:

Նկ. 6. Գորգ «Լոռի»

Նկ. 6ա. «Լոռի» տիպի հիմնական հորինվածքը

Անվանակոչման հարցում կարևորված են հիմնական հորինվածքի դասականի գծայնացված տարբերակը լինելու հանգամանքն ու այս տիպի գորգերի տարածման արեալների թվում Լոռվա գորգագործական կենտրոնների առկայությունը:

Ի տարբերություն այս ենթախմբի դասական օրինակի, «Լոռի» տիպին պատկանող գորգերի թվում հիմնական և բազմանիստ ուրվագծով հորինվածքը մի շարք նմուշների գեղազարդման համակարգերում կրկնված է մի քանի անգամ: Բացի դրանից՝ հայտնի են նաև նմուշներ, որոնց գեղազարդման համակարգում բացակայում են բազմանիստները, իսկ խաչազարդերն էլ կրկնված են մի քանի անգամ (ՀԱԹ 3668): Հենց այս տարբերակն էլ աչքի է ընկնում մանրամասների հարստությամբ, որոնցում հատկապես կարևորված են «խոյեղջյուր» ոճավորումները:

Նկ. 7. Գորգ «Վերի շեն»

«Լոռի» տիպին պատկանող գորգերին բնորոշ «Լոռի-Փամբակ» գծայնացված հորինվածքն իր հերթին ունի որոշակի և կանոնակարգված առանձնահատկություններ (նկ. 7): Այս դեպքում հիմնական հորինվածքն ավելի է պարզեցված, ու բացի դրանից էլ դրանց մեկընդմեջ տեղադրված է ուղղանկյուն գագաթներով և աստիճանաեզր միջնամասերով բնորոշվող մեկական շրջանակ, որոնցում ամփոփված են երկրաչափական զարդեր ու «խոյեղջյուր» ոճավորումներ:

Այդպիսով, միանգամայն նկատելի է, որ այս գորգերի գեղազարդման համակարգում առկա են բավականաչափ լրացումներ: Ուշագրավ է նաև այն, որ «Լոռի» տիպի այս տարբերակին պատկանող մեզ հայտնի գորգերի մի զգալի մասն ունի հայատառ, թվակիր հիշատակարաններ: Պրպտումների շնորհիվ պարզել ենք, որ դրանք ստեղծվել են Գարդման-Ջրաբերդ գավառներում, մասնավորապես Վերի շեն, Էրքեջ, Միրզիկ, Կարաչինար, Բուզլուխ գյուղերում: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ մենք մեր տիպաբանության համակարգում այս գորգերը, իբրև «Լոռի» գորգերի տարբերակ, ներկայացրել ենք որպես առանձին տիպ և այն կոչել Գարդման-Ջրաբերդ տարածաշրջանների գորգագործական առավել հայտնի կենտրոններից մեկի՝ մելիքանիստ *Վերի շեն* բնակավայրի անվանումով:

Իր ուսումնասիրություններում գորգերի այս տիպին անդրադարձել էր նաև գորգագետ Վահրամ Թաթիկյանը: Նա այս տիպի հիմնական հորինվածքում տեսել է արծվի պատկերի ոճավորումներ, դրանք համարել Մամիկոնյան տան զինանշան և գորգերն էլ տարբերակել «Արծվենշան գորգ» անվանումով (Թաթիկյան 2004, 29, պատկեր 45–48): Ավելացնենք, որ, վերը նշվածներից բացի, գոյություն ունեն նաև դրանց շատ ավելի պարզունակ տարբերակները: Դրանք

հիմնականում Կովկասյան տնայնագործական կոմիտեի գործունեության արդյունք են, երբ 1890-ական թվականներից սկսած՝ այդ կազմակերպությունը Հարավային Կովկասի գորգագործական կենտրոններում և այլ բնակավայրերում հիմնեց գորգագործական արհեստանոցներ, որոնցում ի շարս ավանդական գորգերի, գործել են նաև դրանց՝ այդ թվում նաև «Լոռի-Փամբակ» ենթախմբին պատկանող գորգերի համեմատաբար պարզ տարբերակներ:

Այսպիսով, ամփոփելով վերն ասվածները՝ կարելի է հստակորեն եզրակացնել, որ «Լոռի-Փամբակ» ենթախմբին պատկանող բոլոր գորգերի հիմնական բնորոշիչը գորգադաշտի կենտրոնում ներկայացված՝ ոճավորված խաչազարդն է, որն էլ իր հերթին հայոց զարդարվեստի հնամենի և ավանդական տարրերից մեկն է: Այս առումով էլ այն առանցքային կարևորություն ունի հայոց գորգագործական մշակույթի ամբողջական պատկերի բացահայտման և առաջավորասիական ծագումով գորգերի թվում դրանք արժևորելու և ըստ արժանվույն ներկայացնելու համար:

Տարածման արեալների ու ծագումնաբանական հարցերի մասին: Այս ենթախմբին պատկանող գորգերի և ընդհանրապես պատմական Հայաստանի և հարակից տարածաշրջանների գորգագործական կենտրոններին վերաբերող գորգերի ծագումնաբանական հարցերը հիմնականում դեռևս ուսումնասիրված, առավել ևս բացահայտված չեն: Գոյություն ունեցող հրապարակումներում տեղ գտած տեսակետները կամ մեկնաբանությունները մակերեսային են ու շատ թե քիչ լուրջ հիմնավորումներ էլ չունեն:

Ըստ էության, ինչ-որ չափով հստակ է այս ենթախմբին պատկանող գորգեր գործելու տարածաշրջանների հարցը: Մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերը, թանգարաններում պահվող նմուշներին վերաբերող և հրատարակված նմուշների մասին եղած տվյալները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ XIX դ. երկրորդ կեսին և XX դ. առաջին քառորդին դրանք հիմնականում գործել են Գուգարքի, Արցախի, Սյունիքի, ինչպես նաև Վանանդի ու Ջավախքի գորգագործական կենտրոններում: Այսպիսով, այս ենթախմբին պատկանող բոլոր տիպերի գորգեր գործելու հիմնական կենտրոնները պատմական Հայաստանի հյուսիսարևմտյան պատմաազգագրական տարածքներն են, որոնց մի մասը կազմում էր 1880 թվականին ստեղծված, Թիֆլիսի նահանգի մեջ մտած Բորչալու վարչական միավորումը: Տարակարծություններ կան դրանց էթնիկական պատկանելության հարցում. մասնագիտական շրջանակներում այս առումով կարևորվել են տարածաշրջան ներթափանցած և աստիճանաբար հաստատված թուրքմենական և քրդական վաչկատուն ցեղերը:

Մենք այն կարծիքին ենք, որ մշակութային ավանդական տարրերի ծագումնաբանական խնդիրների բացահայտման հարցում առաջնային նշանակություն ունի տվյալ տարածաշրջանի պատմական ժողովրդագրության և հատկապես այդտեղ հաստատված էթնիկական հանրույթների կենցաղավարման նկարագրի մասին հիմնավորված պատկերացում կազմելը: Այս առումով անհրաժեշտ է ներկայացնել 1880–90-ական թթ. վերաբերող դրանց ժողովրդագրական

համառոտ նկարագիրը: Ըստ այդմ՝ XIX դարի կեսերին հայերը կազմում էին Բորչալու գավառակի բնակչության ընդհանուր թվի 86%-ը, Ղազախի գավառում՝ 94,6%-ը, Շամշադինի գավառում՝ 100%-ը (Саркисян 2002, 106–107): 1886 թ. մարդահամարի տվյալների համաձայն, Բորչալու գավառի ամբողջ բնակչության թիվը կազմում էր 101847 մարդ, որից 37732-ը հայեր էին: Բնակչության թվով երկրորդ տեղում էին մահմեդականները՝ 33037 մարդ (Լալայան 2004, 111):

Գոյություն ունեն հստակ փաստեր, որոնք մատնանշում են այդ տարածաշրջանների հանրույթների կողմից գորգագործական մշակույթով զբաղվելու հնարավորությունները: Հայոց առումով կարևորում ենք այն հանգամանքը, որ ի շարս պատմական Հայաստանի գորգագործական այլ կենտրոններում գոյություն ունեցած ավանդույթի, այստեղ էլ գորգը հարսի օժիտի բաղկացուցիչ մաս էր, և աղջիկներն էլ վաղ հասակից իրենց մայրերից սովորում էին գորգ ու կարպետ գործելու արվեստը (Լալայան 2004, 118, 157):

Ըստ էության, այս ամենով էլ պայմանավորված՝ արտերկրի մի շարք ուսումնասիրողներ գորգերի՝ խնդրո առարկա ենթախումբը կովկասյան գորգերի այսպես կոչված «Ղազախ» խմբում ներառելով հանդերձ՝ գտնում են, որ դրանք հիմնականում գործել են այդ տարածաշրջանների հայերը (Ejland 1976, 198–210; Bennet 1981, 147, ավելի մանրամասն տե՛ս Tschebull 1978, 257–261):

Իսկ եկվոր, քոչվորական կենսաձև վարած ցեղերի՝ այդ ոլորտով զբաղվելու մասին պատկերացում է տալիս դրանց կենցաղավարման նկարագիրը: Տարվա մեծագույն մասը լինելով ճանապարհներին կամ սարերում՝ նրանք ժամանակ, հնարավորություն և նույնիսկ անհրաժեշտություն չունեին զբաղվելու այլ օգտակար գործերով, քանի որ իրենց հիմնական զբաղմունքը ավարառությունն էր, և դա ժամանակին արձանագրել են հենց ադրբեջանցի պատմաբանները: Օրինակ, Վ.Ն. Լևիաթովը գրում էր, որ «նրանք (կարափափախները – Ա.Պ.) քոչի ճանապարհին զբաղվում էին թալանով և իսկական աղետ էին նստակյաց բնակչության համար» (Левиатов 1948, 40):

Մասնավորապես, դա վերաբերում էր թարաքյամա ցեղին, որը ձմեռում էր «Կուր գետի մերձակա տափարակներում, Շամքորի, Շամշադինի շրջաններում» (Ռաֆֆի 1987, 236): Նույն զբաղմունքին էին Քոլանի ցեղին պատկանող քրդերը, որոնք հաստատվել էին Թարթառ (Տրտու) գետի նախալեռնային հոսանքներում (ներկայիս Մարտակերտի շրջան), ապրում էին գետնափոր հյուղակներում և բացարձակապես ծանոթ չէին ոչ երկրագործությանը, ոչ էլ արհեստներին (Ռաֆֆի 1987, 275; Լեո 1985, 131–135): Իսկ քոչվորների՝ գորգագործությամբ զբաղվելու հնարավորության մասին Բորչալու-Ղազախ տարածաշրջանում ծնված աշուղ, մոլլա Փանահ Վագիֆը (1717–1797 թթ.) իր մուղամներից մեկում շեշտել է.

... Եթե գեղեցկուհու իրանը նուրբ է ջնարակի նման,
Նա արժանի է ոչ թե տորքի, այլ՝ հինայի:
Քոչվորն անտուն է, կայան չունի,
Մի՞թե կարող է նա դրան հարմարվի... (Керимов 1983, 121):

Բայց տարածաշրջանի ժողովրդագրական նկարագրի և մահմեդական քոչվոր ցեղերի կողմից գորգագործությամբ զբաղվելու մասին կան նաև այլ տեսակետներ: Մասնավորապես, ադրբեջանցի ոչ անհայտ գորգագետ Լյաթիվ Քերիմովը, որի հրապարակած գրքից է վերը բերված քառատողը, առանց որևէ աղբյուր մատնանշելու, գրում է՝ «Բորչալուի բնակչությունը մեծ մասամբ բաղկացած է ադրբեջանցիներից» (Керимов 1983, 145): Ապա հայտնում է, որ ներկայիս բնակչությունը առաջացել է բոզչալու ցեղից, որ Սուլդուզից այդտեղ է տեղափոխվել Սեֆյանների դարաշրջանում, և հայտնի են նաև «կարափափախ» անունով (Керимов 1983, 145): Խնդրո առարկա գորգերի առումով էլ եզրակացնում է, որ դրանց հիմնական հորինվածքը գեղարվեստական տեսակետից վերաբերում է ադրբեջանական գորգագործության կոպիտ, պարզունակ, խեղաթյուրված գյոլերի (հիմնական հորինվածքի անվանման տարբերակ) արվեստին (Керимов 1983, 145): Այսինքն՝ չնայած այդ հորինվածքով բնորոշվող գորգերը կոպիտ են, այդուհանդերձ, այս հեղինակը դրանք համարում է, այսպես կոչված, «ադրբեջանական»: Հանուն արդարության՝ պետք է շեշտենք, որ ինքն այդ տեսակետի միակ հետևորդը չէ:

Այս առումով պետք է նորից անդրադառնանք Վաշինգտոնի գործվածքի թանգարանի փորձագետ Ռաուլ Չեբուլին: Նա «Լոռի-Փամբակ» տիպին ու ամբողջ ենթախմբին վերաբերող գորգերի ծագումնաբանության և էթնիկ պատկանելության բացահայտման համար իրար է համադրել «Կարաչոփ» (մեր տիպաբանությամբ՝ «Փառակա»), «Լոռի Փամբակ», «Երեք մեդալիոնով» (մեր տիպաբանությամբ՝ «Լոռի») և «Վահան» գորգերը՝ որպես դրանց միավորող էլ ընդունելով «Փառակա» տիպի գորգերին բնորոշ հիմնական հորինվածքը: Զարգացնելով իր միտքը՝ Չեբուլը գտնում է, որ այդ հորինվածքի ակունքը թուրքմենական գորգերին բնորոշ վարդակներն են՝ գյոլերը, որոնք իրենց հետ հարավային Կովկաս և Փոքր Ասիա են բերել թուրքմենական ցեղերը (Tschebull 1978, 257–261):

Այստեղ պետք են որոշ պարզաբանումներ. *նախ* որ Չեբուլն իրար է համադրել միանգամայն տարբեր կառուցվածք ունեցող հորինվածքներ, այնուհետև՝ «Լոռի-Փամբակ» տիպի հիմնական հորինվածքը ոճավորված խաչազարդն է՝ ծաղկած խաչի մի ինքնատիպ տարբերակ, որը որևէ աղերս չունի համադրության մեջ դրված մյուս հորինվածքների հետ: Նկատի ունենալով այսքանը՝ մենք անընդունելի և անհիմն ենք համարում Չեբուլի՝ խնդրո առարկա ենթախմբին պատկանող գորգերի ծագումնաբանությանը վերաբերող տեսակետը, որն, ի դեպ, ընդունել են արտերկրի գորգագետներից շատերը:

Ենթախմբին պատկանող գորգերի ծագումնաբանության հետ կապված բացահայտումներ անելու հարցում հիմնական խնդիրը վաղ նմուշների և ընդհանրապես սկզբնաղբյուրների բացակայությունն է:

Այս բացն ինչ-որ չափով լրացնում են նշված հորինվածքի տարբերակով գեղազարդված երկու ասեղնագործություններ, որոնք վերաբերում են XVII–XVIII դարերին: Դրանց գեղազարդման համակարգի հիմնական տարրը նույնպես «Լոռի-Փամբակ» մեկ հորինվածք է: Նման մի բացառիկ նմուշ Ս. Էջմիածինը ձեռք է բերել 2014 թվականին, որը և ներկայումս ցուցադրվում է Մայր Աթոռի գանձատուն-թանգարանում (նկ. 8): Այն արված է հայոց ասեղնագործական արվեստի Արցախ-Ուտիք կենտրոններում, բավականաչափ բարդ ասեղնակարով, իսկ գեղազարդման համակարգն էլ լրացված է այդ նույն տարածաշրջաններին վերաբերող դասական վիշապագորգերին բնորոշ տարրերով: Այս և դասական «Լոռի-Փամբակ» հորինվածքի տարբերությունն այն է, որ կակաչ նախշով են ավարտվում նաև խաչազարդի ուղղաձիգ թևերը, իսկ հորինվածքի կենտրոնում էլ ներկայացված է կեռխաչ (Պողոսյան 2014, 134–136): Մենք պարզել ենք, որ այս ասեղնագործ պատի զարդի տեխնոլոգիական հատկանիշները համահունչ են XVIII դ. վերջին քառորդին Հյուսիսային Արցախի Չարեքա անապատում ստեղծված կաթողիկոսական թագի ասեղնագործություններին: Նկատի ունենալով այդ հանգամանքն ու նաև այն, որ խնդրո առարկա գորգերի ավանդույթների հիմնական կենտրոններից մեկն էլ հյուսիսային Արցախն է, Մայր Աթոռի գանձատանը պահվող ասեղնագործ պատի զարդի ստեղծման վայրն էլ համարում ենք Չարեքա մենաստանը: Երկրորդ նմուշի կատարման տեխնիկան, օգտագործված թելերի որակն ու գուներանգները համահունչ են առաջինին, տարբերությունն այն է, որ այս երկրորդի ազատ տարածքները ծածկված են ոչ թե դասական վիշապագորգերի, այլ 1680 թվականին գործված «Գուհար» գորգին բնորոշ վիշապապատկերների ոճավորումներով: Նկատի ունենալով այս երևույթը՝ գտնում ենք, որ այն նույնպես ստեղծվել է Հյուսիսային Արցախի մենաստաններում:

Նկ. 8. Ասեղնագործ գորգիկ, Հյուսիսային Արցախ, XVII դ. երկրորդ կես

Ի դեպ՝ արտերկրի որոշ գորգագետներ, այդ թվում՝ Վաշինգտոնի գործվածքի թանգարանի փորձագետների և ընդհանրապես գորգագետների շրջանում ճանաչված փորձագետ Ռաուլ Չեբուլը, կարծում են, որ գորգերի, մասնավորապես հենց «Լոռի-Փամբակ» ենթախմբի դասական տիպի գեղազարդման համակարգերի ձևավորման համար հիմնականում օգտագործվել են ասեղ-

նագործության մեջ եղած խաչազարդերը (https://rjohnhowe.wordpress.com/2020/03/14/rtam-on-mike-tschebulls-new-book/): Զարգացնելով այդ տեսակետը՝ Չեբուլը եզրակացնում է, որ ուշ վիշապագորգերի «Գուհար» ենթախմբի «Մասյացոտն» (Կասմ Ուշակ) տիպին պատկանող գորգերի կենտրոնական վարդակը նույնպես կրկնօրինակված է ասեղնագործություններից:

Մենք ենթադրում ենք, որ արտերկրի մասնագիտական շրջանակներին հայտնի չեն գորգերի և ընդհանրապես վերնախավային բնույթի ժողովրդակիրառական արվեստի առարկաների ստեղծման առանձնահատկությունները: Այդպիսիք ստեղծվում էին վերնախավին պատկանող արհեստանոց գործատներում: Բանն այն է, որ ուշ միջնադարից սկսած՝ հայոց աշխարհիկ վերնախավն էլ հիմնականում ներկայացնում էին պատմական Հայաստանի հյուսիսարևելյան նահանգների մելիքական տները: Այստեղ ներկայացնում ենք, մեր կարծիքով, արհեստանոցային արտադրանք հանդիսացած դասական «Լոռի-Փամբակ» տիպին պատկանող գորգերի՝ XIX դ. առաջին կեսին վերաբերող մի տարբերակ, որի հիմնական հորինվածքն, ինչպես տեսնում ենք, ակնհայտորեն նման է XVII–XVIII դարերին վերաբերող ասեղնագործ գորգիկների հիմնական հորինվածքին (նկ. 10) Ինչ վերաբերում վերոհիշյալ արհեստանոցներին՝ այդպիսի հաստատություններ գոյություն ունեին նաև վանական խոշոր համալիրներում, մասնավորապես դրանց կից մենաստաններում: Հիշեցնենք, որ Աղվանից կաթողիկոս Ներսես Երրորդի համար Հյուսիսային Արցախի Չարեքա մենաստանում 1731 թվականին գործված գորգը դրա փայլուն օրինակներից է, նմանատիպ փաստեր հայտնի են նաև այդ նույն տարածաշրջանի Հոռեկա վանքի մասին (Պողոսյան 2014, 135–136): Եղած գրավոր տեղեկությունները վկայում են, որ այդ արհեստանոցներում աշխատել են բարձրակարգ վարպետներ, այդ թվում՝ նկարիչներ, որոնց ստեղծած գորգանկարների գծանկարներից կարող էին օգտվել նաև ասեղնագործողները: Ուստի այս դեպքում ևս անհիմն են գորգերի ու մասնավորապես «Լոռի-Փամբակ» տիպի գորգերի հիմնական հորինվածքները ասեղնագործություններում եղած հորինվածքներ, կրկնօրինակումներ համարող տեսակետները:

Ուստի, կարծում ենք, որ Արցախի և Ուտիքի գորգագործական կենտրոններում, մասնավորապես մելիքական տների ու վանական համալիրների գորգագործական արհեստանոցներում էլ ստեղծվել են այդ գորգերի առաջին օրինակները: Անշուշտ, այս հանգամանքը դեռևս չի նշանակում, որ հենց այդ կենտրոններն էլ եղել են այս ենթախմբի գորգերի գեղազարդման հիմնական համակարգերի ձևավորման բնօրրանները, բայց թույլ է տալիս դրանք դասել այդ շարքում: Ընդ որում՝ պատմական Հայաստանի հյուսիսարևելյան գորգագործական կենտրոններում, ինչպես «Լոռի-Փամբակ» ենթախմբի, այնպես էլ գորգերի մի շարք տիպերի գեղազարդման ավանդույթների տարածված լինելու հարցում նույնպես պետք է կարևորել Արցախի և Ուտիքի գորգագործական ավանդույթները՝ նկատի ունենալով այդ տարածաշրջանների հայերի՝ Տավուշ, Լոռի, Շուլավեր կատարած և մի քանի անգամ կրկնված տեղաշարժերը (Բար-

Նկ. 9. Ասեղնագործ գորգիկ

կումներից՝ ենթախմբի բնորոշիչ խաչազարդի այս տարբերակը հայտնի է եղել Փոքր Ասիայի կենտրոնական և արևելյան գորգագործական կենտրոններին, մասնավորապես Փոքր Հայքին ու Դերսիմին: Ամեն դեպքում արտերկրի որոշ փորձագետներ՝ ի դեմս կակաչների, դրանցում տեսնում են, այսպես կոչված, դասական օսմանյան մշակույթի հետքեր (https://www.1stdibs.com/furniture/rugs-carpets/turkish-rugs/anatolian-konya-rug-apricot-hues/id-f_268350/#zoomModalOpen): Չբացառելով այս տարբերակի՝ տեղական ակունքներ ունենալու հնարավորությունը՝ մենք չենք բացառում նաև պատմական Հայաստանի հյուսիսարևելյան գորգախուտարեանց 1999, 35–37, 68–69, 274, 333–334, 348–351, 357; Լալայան 2004, 15, 63, 113–114, 119):

«Լոռի-Փամբակ» խաչազարդով բնորոշվող գորգերի մեկ այլ տարբերակ էլ հայտնի էր փոքրասիական գորգագործական կենտրոններում: Փոքրասիական տարբերակը նույնպես բնորոշվում է ծաղկած խաչին բնորոշ հիմնական հատկանիշներով՝ մասնավորապես կոկոնավոր ավարտ ունեցող հորիզոնական թևերով: Ամեն դեպքում, ըստ իս, դա միևնույն տիպն է՝ համեմատաբար պարզունակ տեսքով, մասնավորապես ուղղաձիգ թևերի կենդանակերպ ոճավորումների բացակայությամբ (նկ. 9, 10) (https://www.1stdibs.com/furniture/rugs-carpets/turkish-rugs/anatolian-konya-rug-apricot-hues/id-f_268350/#zoomModalOpen; https://www.ebay.com/itm/3749784 50734):

Դատելով մասնագիտական հրապարա-

Նկ. 10. «Լոռի-Փամբակ» փոքրասիական տարբերակը

գործական կենտրոններից այստեղ թափանցած լինելու վարկածը: Խնդիրն այն է, որ փոքրասիական գորգագործական կենտրոններում չափազանց նկատելի է պատմական Հայաստանի հյուսիսային և արևելյան նահանգների գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերի տիպերի առկայությունը: Մենք բազմիցս անդրադարձել ենք այս հարցին, ուստի բավական է հիշեցնել միայն «Ջրաբերդ վիշապագորգ» տիպի գորգերի ավանդույթների և արցախյան բարբառի ու տարազային համալիրների առկայությունը փոքրասիական հայաշատ գորգագործական կենտրոններում, որոնք 1890-ական թվականներին արձանագրել է Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցը (Պողոսյան 2012, 51–70; 2014, 102–110; 2018, 226–243):

Ամփոփելով վերն ասվածները՝ կարելի է եզրակացնել, որ քննության առարկա ենթախմբին պատկանող գորգերի բոլոր տիպերն էլ առաջին հերթին բնորոշ են Արցախ-Ուտիք-Գուգարք նահանգների գորգագործական կենտրոններին: Բացի դրանից, այդ կենտրոնների հայոց տեղաշարժերի հետևանքով, գորգերի այլ տիպերի հետ միասին, նաև «Լոռի-Փամբակ» ենթախմբին վերաբերող ավանդույթներն են արմատավորվել բնակության նոր վայրերում՝ մասնավորապես փոքրասիական գորգագործական կենտրոններում:

«Լոռի-Փամբակ» գորգի գորգադաշտի խորհրդաբանության մասին

Նկ. 11. «Լոռի-Փամբակ» փոքրասիական տարբերակը

Մեր նախորդ հրապարակումներում առիթ ենք ունեցել անդրադառնալ սկզբնական գորգի ծիսամոգական նշանակությանն ու դրա հետ կապված հետագա զարգացումներին (Պողոսյան 2000, 182–183; 2022, 64, 69): Մասնավորապես կարևորել ենք գորգադաշտի և այն երիզող գոտիների գեղազարդման հիմնական հորինվածքների նշանակությունը: Մեր ունեցած դաշտային ազգագրական նյութերն ու գրավոր և պատկերային սկզբնաղբյուրները հնարավորություն են տվել եզրահանգելու, որ գորգն ու գորգադաշտը հայոց մեջ ի սկզբանե ընկալվել են որպես արգասավորության ու պտղաբերության միջավայր: Գորգադաշտը ընկալվում էր իբրև չարի ներգործությունից եզրագոտիներով պաշտպանված տարածք: Այս պարագայում էլ չափազանց կարևորվել է գոտիների՝ մասնավորապես կենտրոնական լայն գոտու գեղազարդման տարրերի

ընտրությունը: Ավանդաբար, հայոց գորգերի գեղազարդման համակարգերում լայն գոտու գեղազարդման համար հիմնականում ընդունվում էին գալարանախշեր, ատամնազարդ կամ կեռիկազարդ գունաշերտեր, աստղաձև, խաչաձև, օձագալար, պայտաձև զարդեր և այլն (Poghosian 2001, 156–162): Մենք հիմք ունենք առանձնապես կարևորելու այդ հանգամանքը՝ նկատի ունենալով այն, որ հայոց գորգերի լայն եզրագոտիների թվում բավականին մեծ տարածում ունի պայտաձև զարդը, որը հայտնի է նաև *դաղդան* անվանումով (Poghosian 2001, 162; Պողոսյան 1983, 56): Ակնհայտորեն նույն իմաստն ունի նաև «Լոռի-Փամբակ» տիպին բնորոշ «եռաժանի» զարդի շարանով ծածկված լայն գոտին: Շեշտենք, որ այդօրինակ պատկերացումները գոյություն ունեին մինչև 1950–60-ական թվականները, երբ գորգ գործելու տարածքն ու գորգագործական տորքը չար աչքի ներգործությունից պաշտպանելու համար նույնպես օգտագործում էին չարխափան հմայական միջոցներ (Poghosian 2001, 162):

Գորգադաշտի սրբազնացված լինելը հայոց գորգագործական մշակույթի մի շարք կենտրոններում դրսևորվում էր առանձնահատուկ մեկնաբանությամբ. այն համարվել է «տափ», այսինքն, գետին՝ «մայր հող»: Ընդ որում՝ այդպիսին համարվում էին առաջին հերթին կարմիր հիմնագույնով գորգերը (Պողոսյան 1984–1991, 64, 105):

Անտարակույս, հենց մի այդպիսի չար աչքից պաշտպանված անաղարտ տարածքում պետք է ծնվի մեռնող և հառնող բնությունը խորհրդանշող առասպելական կերպարը: Հիսուս Քրիստոսի ծնվելու և ընդհանրապես ծիսամոգական հատկանիշներով օժտված գորգի հետ կապված նման մի պատմություն 1640-ական թվականներին Վաղարշապատում գրի է առել թուրք ուղեգիր Էվլիա Չելեբին (Poghosian 2001, 162):

Գորգի «սրբազնացված տարածք» հասկացության և ընդհանրապես ծիսամոգական հատկանիշների առումով առանցքային նշանակություն պետք է ունենար գորգադաշտի հիմնական հորինվածքը: Անշուշտ, կոնկրետ օրինակների ու սկզբնաղբյուրների բացակայության պայմաններում դժվար է հստակորեն մատնանշել գորգի որևէ առանձին տիպ կամ տարբերակ, որը հատկապես նախատեսված լիներ միայն ծիսական արարողություններում գործածելու համար: Այս պարագայում, մենք ելակետային ենք համարում հենց հիմնական հորինվածքն ու դրա պարունակած խորհուրդը:

Տվյալ դեպքում հիմնական հորինվածքը բնորոշվում է ոճավորվածության, ուստի նաև ծիսամոգական պատկերացումներ պարունակելու հատկանիշներով: Դա առաջին հերթին ներկայացնում է խաչը՝ արևի, կյանքի և բնության հավերժության հետ կապված հնամենի պատկերացումների խորհրդանշաններից մեկը: Բայց մենք տեսնում ենք, որ այստեղ այն լրացված է հավերժությունն ապահովող, պտղաբերությունն ու արգասավորությունը խորհրդանշող տեսարաններով: Դրանք խաչազարդի ուղղաձիգ առանցքի գագաթները եզրափակող կենդանակերպ, դիմահայաց պատկերված զույգ ոճավորումներն ու կակաչկոկոնանախշերն են: Անտարակույս, այս հորինվածքի սկզբնական, առաջին

գծանկարը կազմողը օգտվել է իր ձեռքի տակ եղած հնամենի օրինակից և հենց դրանով էլ ծածկել է իր ստեղծած, ծիսամոգական հատկանիշներով օժտված գորգի սրբազան ու կենսաբեր տարածքը:

Եզրակացություններ

1. Ամփոփելով վերն ասվածները՝ եզրակացնում ենք, որ քննության առարկա ենթախմբին պատկանող գորգերի բոլոր տիպերն էլ առաջին հերթին բնորոշ են պատմական Հայաստանի Արցախ-Ուտիք-Գուգարք նահանգների գորգագործական կենտրոններին: Բացի դրանից, այդ կենտրոնների հայոց՝ տարբեր ժամանակաշրջաններում կատարած տեղաշարժերի հետևանքով, գորգերի այլ տիպերի հետ միասին, նաև «Լոռի-Փամբակ» ենթախմբին վերաբերող ավանդույթներն են արմատավորվել բնակության նոր վայրերում, մասնավորապես փոքրասիական գորգագործական կենտրոններում: Այդ գորգերը գեղազարդման արվեստի ու հորինվածքների խորհրդաբանության առումով առանձնակի տեղ ունեն հայոց գորգարվեստում և ընդհանրապես հայոց պատմամշակութային ժառանգության մեջ:

2. Խնդրո առարկա ենթախմբին միավորող հիմնական հորինվածքի՝ «Լոռի-Փամբակ» խաչազարդի բոլոր տարբերակներն էլ բնորոշվում են կառուցվածքային հիմնական սկզբունքով՝ խաչի ուղղաձիգ թևերի գագաթներն ավարտվում են դիմահայաց պատկերված կենդանակերպ զույգ ոճավորումներով, իսկ հորիզոնական թևերը՝ գծայնացված մեկական «կակաչ» բուսածաղկային վարդակով:

3. «Լոռի-Փամբակ» խաչազարդը, որպես այդպիսին, եղել է նաև ասեղնագործության բարդ տեխնիկաներով իրականացված պատի զարդ-գորգիկների հիմնական հորինվածքը: Պահպանված սակավաթիվ նմուշները մեզ հնարավորություն են տալիս ենթադրելու, որ այդ ավանդույթը հատկապես հայտնի էր Հյուսիսային Արցախի մշակութային կենտրոններում՝ մասնավորապես վանական խոշոր համալիրներին կից մենաստաններում:

4. Առանձնակի խորհրդաբանական բովանդակություն է պարունակում ենթախմբի գորգերի հիմնական հորինվածքը: Որպես խաչ՝ այն ինքնին ներկայանում է որպես կենաց ծառ ու այդ առումով էլ խորհրդանշում է ի սկզբանե սրբազնացված գորգադաշտին վերապահված պտղաբերության ու արգասավորության գաղափարը: Չարխափան գոտիներով շրջանակված այդ տարածքը, ըստ հայոց հնամենի ծիսամոգական պատկերացումների, համարվում էր անվտանգ ու անարատ, որը կենսաբեր էր և կարող էր ծնունդ տալ ու վերակենդանացնել մարդուն ու բնությանը:

Այս առումով էլ մենք կարևորում ենք սույն գորգերի գեղազարդման համակարգն ու հատկապես «Լոռի-Փամբակի» խաչազարդ, դասական հորինվածքը՝ որպես առասպելական գորգի երբեմնի ծիսամոգական էության հետ կապված պատկերացումների բացահայտման աղբյուր:

Գրականություն/References/Литература

1. Բարխուտարեանց Մ. 1999, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, հատորը կազմեց՝ Պ. Չոբանյանը, Երևան, Գանձասար աստվածաբանական կենտրոն:
   Bishop Barkhutariants M. 1999, The Land of Aluank and the Neighbours. Artsakh, Compiled by P. Chobanyan, Yerevan, Gandzasar Theological Center (in Armenian).
2. Թաթիկյան Վ. 2004, Արցախի տոհմագորգերը, Երևան, «Լուսաբաց»:
   Tatikian V. 2004, Ancestral Carpets of Karabagh, Yerevan, Lusabats (in Armenian).
3. Լալայան Ե. 2004, Բորչալուի գավառ, Երկեր, հ. 3, Երևան, «Գիտություն»:
   Lalayan E. 2004, Borchalu District, Works, vol. III, Yerevan, Gitutyun (in Armenian).
4. Լեո 1985, Իմ հիշատակարանը, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, «Սովետական գրող», 32–180:
   Leo 1985, My Diary, Collection of Works, Yerevan, Sovetakan Grogh, 32–180 (in Armenian).
5. Պողոսյան Ա. 2010, «Լոռի-Փամբակ» ենթախմբի գորգերի մասին, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 12, 139–145:
   Poghosyan A. 2010, About Carpets of the Subgroup «Lori-Pambak», Collection of Scientific Articles of Gavar State University, N 12, 139–145 (in Armenian).
6. Պողոսյան Ա. 2011, Հարթակարով ասեղնագործության ավանդույթների մասին, Էջմիածին, Է, 53–60:
   Poghosyan A. 2011, On the Tradition of Satin-stitch Embroidery, Etchmiadzin, N 7, 53–60 (in Armenian).
7. Պողոսյան Ա. 2012, Դերսիմի հայոց գորգագործական մշակույթի մասին, Էջմիածին, Ա, 51–70:
   Poghosyan A. 2012, On the Armenian Carpet Weaving Culture of Dersim, Etchmiadzin, N 1, Etchmiadzin, 51–70 (in Armenian).
8. Պողոսյան Ա. 2014, Մայր Աթոռի գորգերի հավաքածուի նոր համալրումների մասին (2008–2014 թթ.), Էջմիածին, Ը, 128–137:
   Poghosyan A. 2014, On New Additions to the Carpet Collection of the Mother See of Holy Etchmiazin (2008–2014), Etchmiadzin, N 8, 128–137 (in Armenian).
9. Պողոսյան Ա. 2014, Գորգագործությունը Փոքր Ասիայում (XIX դ. երկրորդ կես – XX դ. առաջին քառորդ), Հայ ժողովրդական մշակույթ XVI, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Դերենիկ Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, «Գիտություն», 102–110:
   Poghosyan A. 2014, Carpet Weaving in Asia Minor (Second half of the 19th Century – First Quarter of the 20th Century), Armenian Folk Culture XVI, Traditional and Modern in Armenian Culture, Papers in Memoriam of Derenik Vardumyan, to mark his 90th Anniversary, Yerevan, Gitutyun, 102–110 (in Armenian).
10. Պողոսյան Ա. 2018, «Ջրաբերդ» խմբին պատկանող գորգերի ծագումնաբանական ու տիպաբանական հարցերի մասին, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 5, 226–243:

Poghosyan A. 2018, On the Genetics and Typology of the Rugs belonging to the "Jraberd" Group, Collection of Scientific Articles of Gavar State University, N 5, 226–243 (in Armenian).

11. Պողոսյան Ա. 2000, Գորգի ծիսապաշտամունքային նշանակության առթիվ, Պատմաբանասիրական հանդես, N 1, 175–184:
Poghosyan A. 2000, On the Guestion of the Kultand Ritual Significance of the Carpet, Historical-Philological Journal, N 1, 175–184 (in Armenian).
12. Պողոսյան Ա. 2022, Գորգը Հայ առաքելական եկեղեցու արարողակարգերում, Էջմիածին, Զ, 64–79:
Poghosyan A. 2022, Carpet in the Rites of the Armenian Apostolic Church, Etchmiadzin, N 6, Etchmiadzin, 64–79 (in Armenian).
13. Պողոսյան Ա., Դաշտային ազգագրական նյութեր 1984–1991:
Poghosyan A., Ethnographic Field Materials 1984–1991.
14. Ռաֆֆի 1987, Երկու ամիս Աղվանից և Սյունաց աշխարհներում, Երկերի ժողովածու, h. 9, Երևան, «Սովետական գրող», 230–289:
Raffi 1985, Two Months in the Worlds of Aghvan and Syunik, A Collection of Works, vol. 9, Yerevan, Sovetakan Grogh, 230–289 (in Armenian).
15. Керимов Л. 1983, Азербайджанский ковер, т. 3, Баку, «Гянджлик».
Kerimov L. 1983, Azerbaijani Rug, h. 3, Baku, Gianjlic (in Russian).
16. Саркисян Г. 2002, Население Восточной Армении в XIX – начале XX в., Ереван, «Гитутюн».
Sargsyan H. 2002, The Population of Eastern Armenia in the 19th – early 20th Centuries, Yerevan, Gitutyn (in Russian).
17. Bennet J. 2000, Oriental and African Rugs and Carpets. Rugs & Carpets of the World, London, Chartwell Books.
18. Poghosyan A. 2001, Carpets. Armenian Folk Arts, Abrahamian L., Sweezy N. (eds), Culture and Identity, Bloomington and Indianapolis, Indiana University Press, 150–165.
19. Tschebull R. 1978, Entwieklung von vier Kasak-Mustern. Hali, h. 1, N 3, London, Hali Press, 257–261.